ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԱՐՈՆ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ներսիսյան.

Ի պատասխան Ձեր 29.01.2019թ. հ.01/39Մ գրության՝ տեղեկացվում է.

Հայաստանի Հանրապետության կառավարության 25.10.2000թ. հ.682 որոշման համաձայն՝ Ջուղայի փողոցի հ.5 շենքը հանդիսացել է քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային և տվյալ շենքի բնակիչները 2007 թվականին վերաբնակեցվել են, սակայն շենքը չի ապամոնտաժվել: Միաժամանակ տեղեկացվում է, որ Երևան քաղաքում առկա 4-րդ կարգի վթարային բազմաբնակարան շենքերի վերաբնակեցման աշխատանքներն իրականացվում են վերոհիշյալ որոշման, ՀՀ կառավարության 25.10.2009թ. հ.172-Ն որոշման, ինչպես նաև ամենամյա համայնքային գույքի օգտագործման տրամադրման և օտարման տարեկան ծրագրով սահմանված դրույթներին համապատասխան: ՀՀ կառավարության 25.10.2000թ. հ.682 որոշման 7-րդ կետով նախատեսվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության պետին, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահին, ՀՀ ոստիկանության պետին և Երևանի քաղաքապետին (առաջարկությամբ) քանդման ենթակա բնակելի տների բնակեցումից ազատված բնակարաններում չիրականացնել քաղաքացիների կրկնակի բնակեցում, հաշվառում և գույքային գործարքների պետական գրանցում: Տեղեկացվում է, որ ՀՀ օրենսդրությամբ կրկնակի վերաբնակեցում նախատեսված չէ և քննարկվող շենքի փաստացի բնակիչները բազմիցս ծանուցվել են՝ անկանխատեսելի հետևանքներից խուսափելու համար իրենց կողմից ինքնակամ զբաղեցրած բնակարաններն անհապաղ ազատելու մասին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ